ԱՋԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտիչ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաստատութեան առթիւ փոխանակուած հեռագիրները։

«Արարատ»-ի վերջին մամուլը շարուած էր, երբ ստացուեց Վեհափառ Հայրիկից հետևեալ (երրորդ) հեռագիրը։

ԷՋՄԻԱԾԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ։

Ստուած, որ յաջողէ զամենայն յամենայնի, նա կամեցաւ ՎԵՀ ԿԱՅՍԵՐ ձեռօք հաստատել ազգին ընտրութիւնը, սորա համար փութացին ընդհանուր ազգայինք ամեն դասակարգէ շնորհաւորել Կայսերական վաւերացումն։ Ձկարենալով ամեն բուռն զգացմանց մի առ մի պատասխանել, լաւագոյն դատեցի մի հեռագրով վճարել ՄԵՐ հայրական պարտիք յայտնելով իրաւ հոգւոյս։ Նախ օրհնել երկնաւոր Հայր, առ որ կ'աղօթէի, եղիցին կամք Քո։ օրհնել ՕԳՈՍՏՓԱՌ ԿԱՅՍԵՐ կեանքը, որ պսակեց ժողովրդին հաւատք։ օրհնել ազգ, որ հաւատարիմ մնաց եկեղեցու աւանդութեան։ Հեռագիրս հրատարակել տուէք «Արարատ»-ի և լրագրաց միջոցաւ։

ՀԱՅՐԻԿ։

Երկրորդ հեռագիր.

Տեղակալ Երեմիա Եպիսկոպոսին Էջմիածին.

Ստացայ նաև ձեր վերջին հեռագիրը. գոհ ենք բոլոր միաբանութեան յայտնած որդիական զգացմունքներից. ողջոյն և օրհնութիւն հայրական մեր սիրելի որդիներին՝ Միաբաններին։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

—o—

Առաջին հեռագիրը, Էջմիածնում ստացուած յունիսի 4-ին Երուսաղէմից.

Կայսերական կառավարութիւնը հաղորդած լինելով ՄԵԾ. ՄԵՐ հաստատութեան վերջնական ձևականութեանց կատարումը, սպասումենք այստեղում ձեր պատգամաւորութեանը։ Հեռագրեցէք։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

Առ ամենապատիւ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Տեղակալ։

—o—

Այս հեռագրին պատասխանուեց հետևեալ կերպով. 4 յունիսի.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ.

Որդիական ակնածութեամբ ի դիմաց իմ և համօրէն միաբանական ուխտի շնորհաւորելով զհաստատութիւն ձեր ի Գահ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ մաղթիմք ի համբոյր սուրբ աջոյ Վեհափառութեան ձերոյ։

Զունելով տակաւին զպաշտօնական տեղեկութիւն ի Կայսերական Կառավարութենէ Ռուսաց՝ հեռագրաւ դիմեցի առ Կառավարչապետն՝ խնդրելով զհրահանգութիւն վասն առաքման դրաւիրակաց։

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

—o—

Նոյն օրը հեռագրուեց Կառավարչապետին.

Պարոն Կառավարչապետին քաղաքացիական մասի Կովկասի.

ՆՈՐԻՆ Վ.ԵՇԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ հեռագրով յԵրուսաղէմայ յՅ-ն սոյն յունիսի հաղորդէ զյետագայս. «Կայսերական կառավարութիւնն հաղորդեաց մեզ զկատարմանէ վերջնական ձևականութեանց հաստատութեան ՄԵՐՈՑ։ Սպասեմք աստէն հրաւիրակաց ձերոց. հեռագրեցէք»։

Հաղորդելով զայսմանէ Ձերում Բարձր գերազանցութեան, խնդրեմ ըստ այմ խնդրոյ զարժանին հրահանգ։

Տեղակալ Կաթողիկոսի ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

—o—

Կառավարչապետի Դիւանից ստացուեց հետևեալ պատասխանը.

Կառավարչապետի բացակայութեան պատճառով պարտք եմ համարում հաղորդել Ձեր Բարձր Սրբազնութեանը, թէ Կովկասի Գլխաւոր վարչութիւնը չունի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրաման Խրիմեան Աբքեպիսկոպոսի Ամենայն Հայոց Հայրապետ հաստատուելու մասին։

Գեներալ Լեյտենանտ Կոմս ՏԱՏԻՇՁԵՒ։

—o—

Այս պատասխանի հիման վրայ հեռագրուեց Երուսաղէմ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Կովկասու Կառավարչապետը չունի դեռ և-ս Բարձրագոյն հրահանգ։ Ստիպուած ենք նորից սպասել։ Խնդրումենք հեռագրէք մանրամասնութիւնք վասն ապագայ գործառնութեանց։

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԵՄԻԱ։

Սոյն մտքով աւելի մանրամասն հեռագիր ուղարկուեց և Երուսաղէմի Ամենապատիւ Ցարութիւն Պատրիարքին։

Նորից հեռագրուեց Երուսաղէմի Պատրիարքին։

ՆՈՐԻՆ Սրբութիւնը՝ Կաթուղիկոսը՝ մեկնելէ արդեօք Երուսաղէմից դէպի Ռուսաստան, ինչպէս հաղորդումեն լրագիրները և ԵՐԸ։ Խնդրումենք հեռագրէք մանրամասնութիւնք։ Մեր երկու հեռագիրները մնացին առանց պատասխանի։

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Նորից ուղարկուեց Կառավարչապետին հետևեալ հեռագիրը։

Լրագիրների հաղորդածին համաձայն ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ դուրս է եկել Երուսաղէմից։ Զունենալով պաշտօնական տեղեկութիւն և միւս կողմից աչքի առաջ ունենալով Նորին Սրբութեան հեռագիրը, որով պահանջում էր պատգամաւորներ ուղարկել Էջմիածնից՝ գտնուում ենք դժուար դրութեան մէջ։ Խնդրում ենք հրահանգ։

ՏԵՂԱԿԱԼ. ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

—o—

Կառավարչապետից ստացուեց հետևեալ պատասխանը, յունիսի 22-ին։

Մկրտիչ Արքեպիսկոպոսը ԲԱՐԶՐԱԴՈՒՆ հաստատուած է Կաթուղիկոս։ Բարեհաճեցէք հաղորդելու ինձ թէ ուղարկո՞ւմ է արդեօք Սինոդը և ո՞ւր հրաւիրակ Կաթուղիկոսին ուղեկցելու համար։

Գեներալ Ադիւտանտ ՇԵՐԵՄԵՏԵՎ։

—o—

Պ. Կառավարչապետին պատասխանուեց, որ ըստ հնաւանդ սովորութեան, պատուիրակութիւնը պիտի գնայ անպատճառ այնտեղ, որտեղ գտնուում է Նորընտիր Կաթուղիկոսը, ուրեմն և անհրաժեշտ է ուղարկել հրաւիրակներին մինչև Երուսաղէմ։ Բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։ Այլ և հեռագրուեց Ռուսաստան բոլոր թեմերին, Պարսկաստան—Հնդկաստան և Պօլսի Ամեն. Պատրիարքին Նորին Վեհափառութեան հաստատութեան և անուան յիշատակութեան համար։ Նոյնը հեռագրուեց մանրամասնաբար Երուսաղէմ։

—o—

Կառավարչապետից ստացուեց.

Էջմիածնի Սինոդի կողմից ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ողջունելու և ուղեկցելու պատուիրակութիւն ուղարկելուն ոչ մի արգելք չեմ գտնում։ Բարեհաճեցէք հեռագրել ինձ որոնցի՞ց է բաղկանալու և ո՞ւր է գնալու այդ պատուիրակութիւնը։ Եղած տեղեկութիւններին համաձայն Կաթողիկոսը ուղևորուելու է Երուսաղէմից Տրիեստ, Աւստրիայով Օդեսսա, Բաթում, Թիֆլիս։

Գեներալ Ադիւտանտ ՇԵՐԵՄԵՏԵՎ։

—o—

Ստացուեց Կառավարչապետի օգնականից.

Պատշաճաւոր կարգադրութիւնների մասին՝ որպէս զի հրաւիրակները առանց արգելքների ուղևորուեն Երուսաղէմ՝ յայտնուած է Երևանի Նահանգապետին։

Գենեռալ Լէյտենանտ կոմս ՏԱՏԻՇՁԵԻ։

—o—

Աւելորդ ենք համարում Նահանգապետի և այլ վարչութեանց հետ փոխանակուած բազմաթիւ հեռագրերը առաջ բերել։

Ամենապատ. Տէր Ցարութիւն պատրիարքի հեռագիրը յունիս 25-ին։

Նորին Սրբութիւն Կաթուղիկոսը սպասում է այստեղ (Երուսաղէմում) Ձեր պատգամաւորութեանը։

Ստացուեցին վերջապէս Վեհափառ Կաթուղիկոսի վերևում գրուած հեռագիրները։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ ԱՌԱՋՆՈՑ ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ի Նուաստ Երեմիա եպիսկոպոսէ

Ամենախոնարհ յայտարարութիւն։

—

Իղձք փափագանաց մերոց լցան ընտրութեամբ և հաստատութեամբ Վեհափառ Տեառնդ ի Գահ և ի յաջորդութիւն Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ակնկառոյց մնամք գալստեան Սրբութեանդ ի Մայր-Աթոռս։

Հրաման պատուիրանի՝ որ հեռագրաւ Ձերով եհաս առ իս վասն առաքելոյ զպատգամաւորութիւն յոտս Տեառնդ՝ լցոյց զմեզ անհուն բերկրութեամբ՝ աւետելով միանգամայն և զբարձմանէ ամենայն խոչից և խութից՝ որք այսչափ ընդ երկար քաղեցին զոգիս մեր։

Արդ՝ զօրացեալ ի համբաւն աւետաբեր և ընկալեալ ի կայսերական կառավարութենէն Ռուսաց պատասխանի կրկին և կըրկին հեռագրոց իմոց, որով առաջի անելով զպատուէր հրամանի ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ *զհետ մտդէաք ի գիտութիւն և յերևան ածել զհաճութիւնն կայսերական, որ մինչև ցարդ զանխուլ իմն մնայր ի մէնջ և չէր ինչ ի յայտնութիւն եկեալ, ձեռն արկաք առանց յապաղման ընտրել ի միաբանութենէ Աթոռոյս զերկուս եպիսկոպոսունս և զերկուս աբեղայս և յուղի արկանել առ ոտս* Ձեր *յԵրուսաղէմ խնդրելով ի դիմաց միաբանութեանս ողջոյն շնորհ առնել և ընկալնուլ զսոսա իբրև զպատուիրակս եղբայրութեան մայրավանիցս մերոյ։*

Ուստի և համարձակութիւն բերեմ յանձինս յանդիման առնել ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆԴ *զպատուիրակս զայսոսիկ, որք և բերողք թղթոյս, զեպիսկոպոսունս՝ Արիստակէս և Սարգիս անդամս Սինոդոսին, և զաբեղայս՝ Եփրեմ և Մեսրոպ. հայցելով միանգամայն հաճիլ ի սոսա և տալ մեզ ամենեցունցս զառատահեղն զօրհնութիւն Ձեր՝ զհայրականն և զհայրապետականն։*

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՏԵԱՌՆԴ

Նուաստագոյն ծառայ Սրբոյդ,
Եպիսկոպոս և Տեղակալ։

Ի *թուականութեանս մերում*
ՌՅԽԲ, Մարգաց ԺԴ.
Ի Մայր-Աթոռս Սրբոյ
Էջմիածնի։

Թ. 74.

Ի 21 *Յունիսի* 1893 *ամի*
Ի Ս. Էջմիածին։